ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն ____ Լ. Մատինյան

«31» 08 2023 թ.

# «ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի ՈՒՍՈՒՑՉԻ ՕԳՆԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

Ուսուցչի օգնական Ա. Մացակյան

2023-2024 ուստարի

Сканировано с CamScanner

| ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ_ ՆԵՐԸ | ԻՐԱԿԱԿԱՆՑՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ |
| --- | --- | --- |
| ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ և ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ | Նոր ուսումնական տարվա անելիքների պլանավորում,աշխատանքային պլանի և ժամանակացույցի կազմում:<br><br>Կազմակերպել ԲՄԹ –ի մասնակցությամբ քննարկումներ :<br><br>Աշխատանքային պլանի կազմում<br><br>Ծնողի դիմումի համաձայն կազմակերպել տնային ուսուցում<br><br>Տնային ուսուցման ներկայացված 2 աշակերտների փաստաթղթերի կազմում, ներկայացնել հաստատման :<br><br>Ըստ բժշկական քաղվածքի , սահմանված կարգով, կազմակերպել 7-րդ և 8-րդ, դասարանի աշակերտներ Ալեն Մատինյանի, Գևորգ Ղազարյանի, տնային ուսուցումը:<br><br>Ապահովել բոլոր , այդ թվում ԿԱՊԿՈՒ սովորողների համար հանրակրթական ընդհանուր ծրագրերի կատարումը ըստ կրթության աստիճանների, ուսումնական առարկաների:<br><br>Աջակցություն ուսուցչին դասարանում իրականացվող աշխատանքների պլանավորման և դասի թեմային համապատասխան ռեսուրսների | Օգոստոս ամսվա ընթացքում<br><br>Սեպտեմբեր<br><br>Ուսումնական տարվա ընթացքում |

Сканировано с CamScanner

| | | |
|---|---|---|
| | ընտրության ,անհրաժեշտ նյութերի պատրաստման գործընթացում: | |
| **ԴԻՏԱՐԿՈՒՄ** | Ժամանակացույցի /կարգացուցակի / կազմում : Հայտնաբերել ԿԱՊԿՈՒ երեխաներ, կազմակերպել քննարկումներ ԲՄԹ-ի մասնակցությամբ, ներկայացնել 1-ին և 2-րդ մակարդակի գնահատման:<br><br>Կրթական նոր միջավայրին հարմարվելու կարողությունների և դժվարությունների բացահայտմանն ուղղված դիտարկումների առաջին,հինգերորդ, տասներորդ դասարաններում:<br><br>Այլ հաստատությունից տեղափոխված աշակերտների դիտարկում կրթական նոր միջավայրին հարմարվելու կարողությունների և դժվարությունների բացահայտման նպատակով:<br><br>Սովորողների ուսուցման գործընթացին նպաստող կամ խոչընդոտող միջավայրային գործոնների,ուսումնառության դժվարությունների, ուսումնական նյութի<br><br>յուրացմանը խոչընդոտող բովանդակային և հոգեբանամանկավարժական խնդիրների բացահայտմանն ուղղված դիտարկումներ: | Ուսումնական տարվա ընթացքում |

Сканировано с CamScanner

| | | |
|---|---|---|
| | Դասերի ժամանակ աշակերտների վարքի և մասնակցության դիտարկում՝ըստ անհրաժեշտության առանձին ուղղորդումներ տրամադրելու և դասապրոցեսին առավելագույնս ներգրավվածություն ապահովելու նպատակով: | Ուսումնական տարվա ընթացքում |
| ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ | Աջակցում ուսուցիչներին հանրակրթական պետական չափորոշիչներով և առարկայական չափորշիչներով ու ծրագրերով սահմանված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացման գործընթացներում կիրառելով դասավանդման արդյունավետ մեթոդներ և տեխնոլոգիաներ:<br><br>Սովորողների ուսումնառության գործընթացում արձանագրված դժվարությունների, ուսումնական նյութի յուրացմանը խոչընդոտող բովանդակային և հոգեբանամանկավարժական խնդիրների հաղթահարմանն ուղղված անհատական և խմբային աշխատանքներ:<br><br>Հանդիպումներ դասվանդող ուսուցիչների հետ՝սովորողի դժվարությունների քննարկման և համատեղ աշխատանքային պլանավորման նպատակով:<br><br>Նոր աշխատանքի ընդունված ուսուցիչներին ծանոթացնել ԿԱՊԿՈՒ աշակերտներին, նրանց հետ աշխատելու առանձնահատկություններին, ԱՈՒՊ-ով աշխատելու և լրացնելու ձևին:<br><br>Աջակցություն ԿԱՊԿ ունեցող սովորողներին դասի | Ուսումնական տարվա ընթացքում<br><br>Սեպտեմբեր |

Сканировано с CamScanner

| | | |
|---|---|---|
| | ընթացքում դիտարկում, համատեղ դասավանդում, վարքագծի կառավարում:<br><br>Աջակցություն սովորողներին դասից հետո:<br><br>Աջակցում ԿԱՊԿՈՒ երեխաներին՝ դպրոցի ենթակառուցվածքում առկա գրադարանի, մարզադահլիճի, ճաշարանի, կրթական և այլ ծառայություններից օգտվելու խնդրում : | Ուսումնական տարվա ընթացքում |
| ԱՈՒՊ-Ի ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ | Աջակցություն ԱՈՒՊ –ի մշակման աշխատանքներին:<br><br>Սովորողի կրթական գործընթացում կիրառված արդյունավետ ռազմավարության և առաջացած դժվարությունների մասին տեղեկատվության տրամադրում ԱՈՒՊ -ի մշակման նպատակով:<br><br>Մասնակցություն սովորողի ԱՈՒՊ-ի ընթացիկ կիսամյակային և տարեկան ամփոփիչ գնահատման աշխատանքներին: | Ուսումնական տարվա ընթացքում |
| ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | Արտադասարանական և արտադպրոցական տարաբնույթ միջոցառումների կազմակերպման և իրականացման աշխատանքներ: Բոլոր երեխաների անվտանգության և վերահսկողության ապահովում:<br><br>Համագործակցում սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմկերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում: | Ուսումնական տարվա ընթացքում |

Сканировано с CamScanner

| | | |
|---|---|---|
| | Մասնակցություն հաստատության մեթոդմիավորումների աշխատանքներին :<br><br>Ինտելեկտուալ խնդիրներ ունեցող սովորողներին ազատել տարեվերջյան ավարտական քննությունից և գիտելիքների ստուգումից , իսկ այլ ֆունկցիոնալ խանգարումով աշակերտներին աջակցել նախապատրաստելով ավարտական քննություններին մասնակցելուն:<br><br>1-ին և 2-րդ կիսամյակների ամփոփում Հաշվետվություն: | |
| **2023-2024 ուստարվա հաշվետվության կազմում , ներկայացում.** | | Հունվար-մայիս |

Сканировано с CamScanner